Բարդ նախադասություն

348. Ա և Բ խմբերի նախադասությունները համեմատի՛ր: Յուրաքանչյուր նախադասության մեջ քանի՞ ստորոգյալ կա:

Ա. Հին ժամանակներում առագաստանավը շատ կարևոր փոխադրամիջոց էր համարվում:
1862 թվականին առագաստանավերով մրցելու կանոններ մշակվեցին:
Նրան շատ է հետաքրքրում առագաստանավային սպորտը:
Արդեն տասնվեցերորդ դարում գեղասահքի սիրահարներ կային Հոլանդիայում:
Բ. Հին ժամանակներում առագաստանավը շատ կարևոր փոխադրամիջոց էր համարվում, իսկ այսօր նա միայն սպորտում է գործածվում:
1862 թվականին առագաստանավերով մրցելու կանոններ մշակվեցին, իսկ դրանից առաջ մրցող մարզիկներն ուղղակի պայմանավորվում էին:
Նրան շատ է հետաքրքրում առագաստանավային սպորտը, որը հրապուրում է ծովի, երկնքի ու համարձակության բոլոր սիրահարներին:
Արդեն տասնվեցերորդ դարում գեղասահքի սիրահարներ կային Հոլանդիայում, որտեղ մշակվել է այսօրվա գեղասահքի տեխնիկան:

Ա. և Բ. խմբերը իրարից տարբերվում են նրանով , որ Ա. խմբում 1 ստորոգյալ է , իսկ Բ. խմբում 2 ստորոգյալ կա։

349. Նախադասություններն ավարտի՛ր: Առաջադրանքը հնարավո՞ր է կատարել՝ առանց ստորոգյալ ավելացնելու:

Աքլորներն իրար բզկտում էին, որովհետև ամեն մեկը ուզում էր առաջինն ուտել։
Սարսափելի փոթորկից նավը շուռ կգար, եթե փոթորիկը շուտ չհանգստանար։
Փողոցում երեխաներից բացի մարդ չկար, ուրեմն նրանց ծնողները դեռ քնած էին։
Փողոցում երեխաներից բացի մարդ չկար, իսկ երեկոյան այնքան մարդ կար որ ասեղի տեղ չկար գցելու։
Քանդակագործը գիշեր ու զօր աշխատում էր, երբ էր ավարտելու քանդակը անհայտ էր։ Լավ եղանակին այնտեղ էի տանում շնիկիս, որ ուրիշ շնիկների հետ խաղա։

350. Ա և Բ խմբերի նախադասությունները համեմատի՛ր: Ի՞նչ տարբերություն կա:

Ա. Քամին կամակոր տարերք է: Մարդիկ նրա էներգիան էլ են օգտագործում:
Բնության քանդակագործներից մեկն էլ քամին է: Նա անդուլ աշխատում է փոխել Երկրի դեմքը:
Այնտեղ չոր ու մերկ հող կա: Քամին փոշու զանգվածներ է օդ հանում:
Բ. Քամին կամակոր տարերք է, բայց մարդիկ նրա էներգիան էլ են օգտագործում:
Բնության քանդակագործներից մեկն էլ քամին է, որը անդուլ աշխատում է փոխել Երկրի դեմքը:
Քամին փոշու զանգվածներ է օդ հանում այնտեղ, որտեղ չոր ու մերկ հող կա:
Առաջին խմբի նախադասությունները պարզ են, իսկ երկրորդինը բարդ:

351. Ինքդ անուններ գտի՛ր և տրված նախադասությունը լրացրո՛ւ:

Նախորդ վարժության Ա խմբում պարզ համառոտ նախադասություններ են, որովհետև ունեն 1 ենթակա և 1 ստորոգյալ: Բ խմբում բարդ նախադասություններ են, որովհետև ունեն 1-ից ավելի ենթակա կամ 1-ից ավելի ստորոգյալ:

352. Նախադասություններն ավարտի՛ր: Գտի՛ր ստացված նախադասությունների արտահայտած մտքերի տարբերության պատճառը:

Նա ամեն առավոտ վազում է, որ նիհարի:
Նա ամեն առավոտ վազում է, որպեսզի հասցնի ավտոբուսին:
Նա ամեն առավոտ վազում է, չնայած սպորտով չէր զբաղվում:
Նա ամեն առավոտ վազում է, իսկ ընկերը գերադասում էր տանը մնալ: Նա ամեն առավոտ չի վազում, այլ ընդամենը նստած հեռուստացույց է նայում:

353. Նախադասություններն ավարտի՛ր: Ինչո՞վ են տարբերվում ավարտները:

Մի մարդ շուկայից ոչ թե ձեռնասուն կաքավ գնեց, այլ գնեց աղունիկ:
Մի մարդ շուկայից ձեռնասուն կաքավ գնեց, որպեսզի նոր տարուն նվիրի իր կնոջը:
Մի մարդ շուկայից ձեռնասուն կաքավ գնեց, որովհետև նրա կարծիքով կաքավը ամենասիուն թռչուններից մեկն է:
Մի մարդ շուկայից ձեռնասուն կաքավ գնեց, որը շատ սիրեց իր նոր տիրոջը:
Մի մարդ շուկայից ձեռնասուն կաքավ գնեց, որին բնության մեջ բաց թողեց:
Մի մարդ շուկայից ձեռնասուն կաքավ գնեց,երբ տեսավ , որ կաքավը գեղեցիկ է շատ: Նախադասությունները տաբերվում են ստորոգյալներով: